

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով և 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպություններում համայնքային բաժնեմասից ստացվող շահութաբաժինների վճարման գործընթացը կանոնակարգելու նպատակով

Երևանի ավագանին որոշում է.

1. Հաստատել.

1) Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպություններում շահութաբաժինների վճարման գործընթացի կազմակերպման կարգը՝ համաձայն N1 հավելվածի,

2) Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տոկոսների հաշվարկման, վճարման և պարտավորությունների գանձման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքի ձևը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Սահմանել, որ Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններում՝

1) բաժնետերերի ընդհանուր ժողովների (Երևան քաղաքի ավագանի) քվեարկությանն ու հաստատմանն է դրվում Երևան համայնքի մասնակցության դիմաց տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով ստացված զուտ շահույթի 20 տոկոսից ոչ պակաս գումար, որպես տարեկան շահութաբաժին, Երևանի բյուջե վճարելու հարցը:

2) տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով ստացված մինչև երեք միլիոն դրամ զուտ շահույթից Երևանի բյուջե շահութաբաժին վճարելու հարցը բաժնետերերի ընդհանուր ժողովներում (Երևան քաղաքի ավագանի) քվեարկության և հաստատման չի դրվում (շահութաբաժին չի վճարում):

3) այն դեպքում, երբ զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, կամ կապակասի շահութաբաժինների վճարման հետևանքով, ապա Երևանի բյուջե շահութաբաժին

վճարելու հարցը բաժնետերերի ընդհանուր ժողովներում (Երևան քաղաքի ավագանի) քվեարկության և հաստատման չի դրվում (շահութաբաժին չի վճարում):

3. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններում, սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով, կարող են բաժնետերերի ընդհանուր ժողովների (Երևան քաղաքի ավագանի) քվեարկությանն ու հաստատմանը դրվել Երևան համայնքի մասնակցության դիմաց ստացված զուտ շահույթից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի 20 տոկոսից պակաս չափեր:

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների առաջարկություններով և աշխատակազմի ֆինանսական ու եկամուտների հաշվառման և գանձման վարչությունների համաձայնությամբ՝ նախորդ տարվա համայնքային գնումների ֆինանսավորման գծով բյուջետային պարտավորությունները կարող են հաշվանցվել այդ տարվա վճարման ենթակա շահութաբաժինների սահմաններում՝ բանկային (գանձապետական) հաշիվների միջոցով, «Վճարում-գանձում» եղանակով:

5. Սույն որոշման դրույթները կիրառվում են Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների 2009 թվականի և հետագա տարիների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթից շահութաբաժինների համայնքի բաժնեմասի վճարման գործընթացի նկատմամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ****I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգը սահմանում է Երևան համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպություններում համայնքի բաժնեմասից ստացված շահութաբաժինները Երևանի բյուջե վճարելու գործընթացը:

**II. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ
ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲԱԺՆԵՄԱՍԻՑ
ՍՏԱՑՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

2. Համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունները տարեկան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ, բայց ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա ապրիլի 15-ը, Երևան քաղաքի ավագանու հաստատմանն են ներկայացնում զուտ շահույթի բաշխման ուղղությունները ու ծախսման նախահաշիվներն, համայնքի բաժնեմասի դիմաց Երևանի բյուջե շահութաբաժինների վճարման առաջարկվող չափերը համաձայն սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված ձևի, դրանց կցելով հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունների NN 1-5 ձևերը:

3. Ընկերության կողմից առաջարկվող շահութաբաժինների Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված չափի նվազեցման վերաբերյալ առաջարկություններին կցվում են նաև ֆինանսատնտեսական հիմնավորումները և խորհրդի (դրա առկայության դեպքում)՝ ընդհանուր ժողովին ուղղված առաջարկությունը, ինչպես նաև ընկերությունը համակարգող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման եզրակացությունը:

4. Ընկերության կողմից առաջարկվող շահութաբաժինների Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված չափի ավելացման վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են ընկերությունը համակարգող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման եզրակացությամբ:

5. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումները (ֆինանսական ու եկամուտների հաշվառման և գանձման վարչություններ) Երևան քաղաքի ավագանու հաստատմանն են ներկայացնում Երևանի բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափերի հաստատման մասին հարցը:

6. Տարեկան շահութաբաժինների վճարման մասին Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման օրվանից եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը (ամսական՝ հավասար չափերով), եթե ընդունվում է այդպիսի որոշում, շահութաբաժինների համայնքի բաժնեմասին համապատասխանող մասը վճարվում է Երևանի բյուջե:

7. Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների խորհուրդների (այդպիսիք չստեղծվելու դեպքում՝ ժողովների) կողմից

միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և վճարման ժամկետների մասին որոշումներն ընդունվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին ընկերության խորհրդի (այն չստեղծվելու դեպքում՝ ժողովի՝ Երևան քաղաքի ավագանու) կողմից որոշման ընդունման օրվանից երկամսյա ժամկետում շահութաբաժինների համայնքի բաժնեմասին համապատասխանող մասը վճարվում է Երևանի բյուջե:

9. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը (աշխատակազմի ֆինանսական վարչություն) ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների տարեկան (միջանկյալ) հաշվապահական հաշվեկշիռներում, որպես կրեդիտորական պարտքեր, Երևանի բյուջեի նկատմամբ շահութաբաժինների գծով պարտավորությունների արտացոլումը:

10. Սույն կարգի 6-րդ և 8-րդ կետերով սահմանված ժամկետներում տարեկան ու միջանկյալ շահութաբաժիններն ամբողջությամբ Երևանի բյուջե չվճարելու դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը (աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման ու վերահսկողության վարչություններ) Երևանի քաղաքապետի քննարկմանն է ներկայացնում համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների գործադիր մարմինների պաշտոնատար անձանց աշխատանքը շարունակելու նպատակահարմարության հարցը:

III. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԻՆՉԵՎ 50 ՏՈԿՈՍ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՅՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՄԻՋԱՆԿՑԱԼ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Համայնքի սեփականություն համարվող մինչև 50 տոկոս բաժնեմաս ունեցող կազմակերպություններում տարեկան և միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշումներ ընդունելու դեպքում՝ որոշման ընդունման պահից 15 օրվա ընթացքում այդ ընկերություններում համայնքի լիազոր ներկայացուցիչները Երևանի քաղաքապետին են ներկայացնում տեղեկատվություն որոշման ընդունման օրվա՝ որպես շահութաբաժին Երևանի բյուջե վճարման ենթակա գումարի չափի և վճարման ժամկետների մասին:

12. Համայնքի սեփականություն հանդիսացող մինչև 50 տոկոս բաժնեմաս ունեցող ընկերությունների բաժնետերերի (մասնակիցների) տարեկան ընդհանուր ժողովների՝ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ սահմանված ժամկետում, շահութաբաժինների համայնքի բաժնեմասին համապատասխանող մասն ենթակա է վճարման Երևանի բյուջե:

13. Համայնքի սեփականություն հանդիսացող մինչև 50 տոկոս բաժնեմաս ունեցող ընկերությունների խորհուրդների (այդպիսիք չստեղծվելու դեպքում՝ ժողովների) կողմից միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման ընդունման դեպքում՝ որոշմամբ սահմանված ժամկետում այդ շահութաբաժինների համայնքի բաժնեմասին համապատասխանող մասն ենթակա է վճարման Երևանի բյուջե:

14. Եթե համայնքի սեփականություն հանդիսացող մինչև 50 տոկոս բաժնեմաս ունեցող ընկերության կանոնադրությամբ սահմանված է միջանկյալ շահութաբաժինների վճարում նաև գույքով, և խորհուրդը (այն չստեղծվելու դեպքում՝ ժողովը) որոշում է միջանկյալ ամբողջ շահութաբաժինը վճարել գույքով, ապա այդ շահութաբաժինների համայնքի բաժնեմասին համապատասխանող գույքն որոշմամբ սահմանված ժամկետում հանձնվում է «Երևանի քաղաքապետարան» համայնքային կառավարչական հիմնարկին պահառության, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարման և առաջացած դրամական միջոցներն որպես շահութաբաժին Երևանի բյուջե փոխանցելու համար:

Նշված գույքի պահառության և օտարման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են այդ գույքի օտարումից ստացվող գումարների հաշվին:

IV. ՕՏԱՐՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՕՏԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

15. Համայնքի բաժնեմասից ստացված շահութաբաժինների գծով կազմակերպությունների պարտավորությունները և դրանց մարման ժամկետները (մինչև մեկ մլն. դրամ պարտավորության դեպքում՝ օտարման պայմանագրի կնքման օրվանից մեկամսյա, 1-5 մլն. դրամ պարտավորության դեպքում՝ երկամսյա, 5 մլն. դրամ և ավելի պարտավորության դեպքում՝ եռամսյա ժամկետում) առանձին տողով ամրագրվում են այդ ընկերությունների օտարման և (կամ) օտարման նախապատրաստման մասին Երևանի ավագանու որոշման մեջ, ինչպես նաև օտարման պայմանագրերում:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՅՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

16. Համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններում շահութաբաժինների վճարման գործընթացում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների աշխատանքի համակարգումը, ինչպես նաև ըստ կազմակերպությունների շահութաբաժինների համայնքի բաժնեմասի չափերի վերանայման վերաբերյալ առաջարկությունների հիմնավորվածության աստիճանի գնահատման, հաշվառման, սահմանված կարգով և ժամկետներում վճարման, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող մինչև 50 տոկոս բաժնեմաս ունեցող կազմակերպություններին՝ շահութաբաժինների համայնքի բաժնեմասի հաշվառման և վճարման ժամկետների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական ու եկամուտների հաշվառման և գանձման վարչությունները:

17. Սույն կարգի 6-րդ և 12-րդ կետերով սահմանված ժամկետներում համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող, ինչպես նաև օտարված, սակայն շահութաբաժինների գծով Երևանի բյուջեի նկատմամբ պարտավորություններ ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժիններն ամբողջովին Երևանի բյուջե չվճարելու դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված դրույթները սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգով:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչությունը սահմանված կարգով Երևանի բյուջե շահութաբաժինների վճարումն ապահովելու նպատակով ձեռնարկում է միջոցներ:

18. Ստուգումների ընթացքում տարեկան զուտ շահույթի և շահութաբաժինների համայնքի բաժնեմասի հաշվարկման հիմնավորվածության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչությունը և արդյունքների մասին եռամսյակային կտրվածքով տեղեկատվություն է ներկայացնում Երևանի քաղաքապետին:

ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԶՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. Կարգավորման առարկան

1 Սույն կարգով կարգավորվում են շահութաբաժին վճարողի կողմից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների գումարները սահմանված ժամկետում չվճարելու (մասնակի վճարելու) դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից տոկոսների հաշվարկման, պարտավորությունների մարման հերթականության, ինչպես նաև գանձման հետ կապված իրավահարաբերությունները:

II. Շահութաբաժին վճարողի կողմից շահութաբաժնի գումարը սահմանված ժամկետում չվճարելու (մասնակի վճարելու) դեպքում տոկոսների հաշվարկման կարգը

2. Համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու (չվճարելու) դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված դրույթները կիրառվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսների ու իրավաբանական վարչությունների կողմից՝ սույն կարգով սահմանված իրավասությունների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից համապատասխան ժամանակահատվածների համար սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույթներին (օրական) համապատասխան, չվճարված շահութաբաժնի գումարի (այդ թվում նաև ստուգման արդյունքներով լրացուցիչ արձանագրված) նկատմամբ՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$I = T \times O \times \frac{R/365}{100}, \text{ որտեղ՝}$$

I- տոկոսի հաշվարկվող գումար,

T- տոկոսի հաշվարկման ժամանակաշրջանը՝ օրերով,

O- շահութաբաժնի պարտավորություն կամ վերջինիս մնացորդ,

R- բանկային տոկոսի հաշվարկային դրույթ (%):

4.. Տոկոսի հաշվարկը սկսվում է շահութաբաժնի վճարման համար սույն որոշման հավելված 2-ի 6-րդ կետով սահմանված վճարման ժամկետի հաջորդ օրվանից՝ հոկտեմբերի 1-ից: Ընդ որում, եթե վճարման ժամկետը համընկնում է տոն կամ ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վճարման ժամկետ է համարվում հաջորդ աշխատանքային օրը:

5. Տոկոսի հաշվարկումը դադարեցվում է ընկերությունը շահութաբաժնի վճարումից ազատելու կամ լուծարելու մասին Երևանի ավագանու որոշումը և սնանկացման վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու օրվանից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6. Ստուգման ակտերով լրացուցիչ գանձման առաջադրված շահութաբաժնի գումարի նկատմամբ տոկոսները մինչև ստուգման ակտի կազմման օրը ներառյալ հաշվարկվում է ստուգումն իրականացնող անձի կողմից և արձանագրվում ակտում: Ակտը կազմելուն հաջորդող օրվանից սկսած, տույժերի հաշվարկը շարունակվում է աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության կողմից՝ մինչև շահութաբաժնի պարտավորության (վերջինիս մնացորդի) փաստացի վճարման օրը (եթե այն համընկնում է տոն կամ ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վճարման ժամկետ է համարվում հաջորդ աշխատանքային օրը):

III. Շահութաբաժին վճարողի կողմից կատարված փաստացի վճարումների դեպքում շահութաբաժնի պարտավորությունների մարման հերթականությունը և ժամկետները

7. Շահութաբաժին վճարողի կողմից ներկայացված վճարման հանձնարարագրում պարտքի մարման ժամանակաշրջանը (կոնկրետ այն տարին, որի համար կատարվում է վճարումը) կամ մարվող պարտավորության բաղադրիչը (շահութաբաժնի գումարը կամ շահութաբաժնի գծով հաշվարկված տոկոսը) չնշելու դեպքում՝ Երևանի բյուջե կատարված փաստացի վճարումների հաշվին շահութաբաժնի գծով առաջացած պարտավորությունները մարվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 358 հոդվածով սահմանված հաջորդականությամբ՝

- 1) պարտավորության կատարման ստացմանն ուղղված պարտատիրոջ ծախսերը,
- 2) տոկոսները (շահութաբաժնի գծով հաշվարկված տույժերը),
- 3) շահութաբաժնի պարտավորության հիմնական գումարը՝ ըստ առաջացման ժամկետների վաղեմության,

8. Շահութաբաժին վճարողի կողմից շահութաբաժնի գծով առկա պարտավորությունից (ներառյալ նաև տոկոսի գումարները) ավելի մեծ գումար վճարելու դեպքում, պարտավորությանը գերազանցող գումարը գրանցվում է որպես գերավճար, որի հաշվին առաջնահերթ մարվում են սույն կարգի 7-րդ կետով նախատեսված պարտավորությունները (սահմանված հաջորդականությամբ), այնուհետև՝ շահութաբաժնի գծով նոր առաջացած պարտավորությունները: Նոր պարտավորություններ չառաջանալու դեպքում, շահութաբաժին վճարողի ցանկությամբ, նշված գերավճարը կարող է վերադարձվել վճարողին:

IV. Շահութաբաժնի գծով պարտավորությունների գրանցումը

9. Սույն կարգով նախատեսված տոկոսների հաշվարկումը և շահութաբաժինների գծով պարտավորությունների բազայում գրանցումը կատարվում է յուրաքանչյուր գործառնության (վճարում, վերահաշվարկ, հաշվանցում և այլն) իրականացման դեպքում:

10. Վճարումների (մուտքերի) վերաբերյալ գրանցումները կատարվում են յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի

կողմից տրամադրվող տեղեկանքի հիման վրա: Տեղեկանքն առնվազն պետք է բովանդակի՝ Երևանի քաղաքապետարանի և շահութաբաժին վճարողի անվանումները, այն ժամանակահատվածը (տարին), որի համար կատարվել է վճարումը, փոխանցված գումարի չափը, վճարման նպատակը՝ կոնկրետ նշելով նրա բաղադրիչների (շահութաբաժին և/կամ տույժ) գումարները, բյուջե մուտքագրման ամսաթիվը:

11. Վճարման օր է համարվում գումարը համապատասխան հաշվին փոխանցում կատարելու համար ընկերությանը սպասարկող բանկի կողմից վճարման հանձնարարագրի վավերացման օրը:

V. Շահութաբաժնի գծով պարտավորությունների դատական գանձումը

12. Շահութաբաժնի գծով պարտավորությունների և /կամ/ հաշվարկված տոկոսների դատական գանձումն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչությունը՝ ֆինանսական վարչության կողմից ներկայացված նյութերի (փաստաթղթերի, տեղեկանքների և /կամ/ հաշվարկների) հիման վրա:

13. Շահութաբաժնի գծով պարտավորությունների (հաշվարկված տոկոսների) դատական գանձումն իրականացնելու գործընթացի, ինչպես նաև վերջինիս արդյունքների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչությունը աշխատակազմի ֆինանսական վարչությանը տրամադրում է համապատասխան տեղեկատվություն և /կամ/ փաստաթղթային հիմքեր:

Ձև

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող _____ կազմակերպության կողմից
առևտրային կազմակերպության անվանումը

Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի վճարման չափի առաջարկության մասին

Համայնքի մասնակցության չափը (տոկոս)	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ, (հազ. դրամ)	Չվճարված կապիտալ, (հազ. դրամ)	Զուտ ակտիվներ, (հազ. դրամ)	Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո (Ֆինանս. արդ. մասին հաշվ. Ձև N2 180 տող, սյուն 4), (հազ. դրամ)	Երևանի բյուջե փոխանցման ենթակա շահութաբաժինը		ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-ի հոդված 3-րդ կետի հիմքով շահութաբաժինների վճարման սահմանափակման առկայությունը
					տոկոս	հազ. դրամ	
1	2	3	4	5	6	7	8

Տեղեկանքի ներկայացման օրը
«_____» _____ 201-- թ.

Գործադիր տնօրեն _____
(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ. Տ.

Համապատասխան ստորաբաժանման ղեկավար (վարչական
շրջանի ղեկավար, վարչության պետ) _____
(ստորագրությունը)

(անուն ազգանուն)

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին» որոշման

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպություններում համայնքային բաժնեմասից ստացվող շահութաբաժինների վճարման գործընթացը կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 49-րդ, 50-րդ և 67-րդ հոդվածների պահանջների և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով և 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, Երևան քաղաքի ավագանին, գործելով որպես Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների բաժնետերերի ընդհանուր ժողով, սահմանում է Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից Երևանի բյուջե շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգը, կանոնակարգում է շահութաբաժինների վճարման գործընթացում Երևանի քաղաքապետարանի ստորաբաժանումների լիազորությունները և աշխատանքի կազմակերպման կարգը:

Վերոհիշյալ նախագծի հիմքում, որպես ուղեցույց ընդունվել են ՀՀ կառավարության 05.12.2001թ. «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը կառավարող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» N1194 որոշմամբ հաստատված կարգի դրույթները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 21.04.2008թ. «50 տոկոսից ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում տոկոսների հաշվարկման, վճարման և պարտավորությունների գանձման կարգը հաստատելու մասին» N306-Ա հրամանով հաստատված կարգը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին» որոշման վերաբերյալ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից շահութաբաժինների Երևանի բյուջե վճարման գործընթացը կանոնակարգելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ